

ՄԱՅՆԱԽՈՍԱԿԱՆ

ՆՅԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԵՆՈՐԱԿԱՆ ԿԱՐԵՆՈՐԱԿԱՆ ԿԱՐԵՆՈՐԱԿԱՆ

Վ իննսուհի Գիտութեան ճեմարանին՝ 1895 թ. 14 տեղեկագրութեան մէջ՝ որ հազիւ այս օրերս հրապարակ ելած է, կը կարդանք թէ՛ Փիլիսոփայական-Պատմական դասին նստին մէջ Մայիս 22ին, քարտուղարն կը ներկայացընէ Վիննայի համալսարանի փրոֆեսոր Տր. Վիլհելմ Թոմաշեքի մէկ յօդուածն, որ Արդեւ-միայի տեղեկագրութեանց համար որոշեալ է: Եօդուածին անունն է. «Սասուն եւ Տիգրիսի աղբերակներն» պատմական-տեղեկագրական խուզարկութիւն. Ա. Սասունի վրայ պատմական տեղեկութիւններ:

Ասոր վրայ հեղինակն հետեւեալ կ'ըսէ.

«Ս. քանի մը սահմանակից լեռնազաւառներով գրեթէ բոլորովին անմանօթ երկիր մըն է. Տիգրիսի աղբերականց վրայ հազիւ նորագոյն ժամանակներս բաղձացեալ լուսաւորութիւնն ունեցանք, այնպէս որ հիմայ պիտի կարենանք անցեալ դարերու բաղձութիւն տեղեկութիւններն որոնք իրարու հակառակ եւ անոր համար առեղծուածական կ'երեւան, հասկընալ եւ քննութեան նիւթ ընել: Դաւեւ վերջին ժամանակներս շատ յիշած Ս. Գաւառին՝ որ հեռաւոր լեռնազաւառ մըն է, բնակչաց սերունդն եւ պատմական դէպքերն այնպէս քիչ լուսաւոր եւ ծանօթ են, եւ Արեւելքի ու Արեւմուտքի գրականութեան մէջ գտնուած տեղեկութիւններն այնպէս սակաւ եւ անյարիր են, որ զանոնք հաւաքեն եւ քննական լուսաբանութեան ենթարկեն՝ գիտական կարեւորութիւն մը դարձած է: Հեղինակն այս երկու պարտականութիւններն քաջապէս կատարել ուզած է. առաջարկեալ մասին մէջ՝ հայերէն, թիւզնիզական, ասորական, արաբական եւ տաճկական մատենագրութեան մէջ Սասունի վրայ եղած ամէն տեղեկութիւններուն վրայ կը խօսի. մերձաւոր յօդուածին մէջ ձշգիւ տեղեկութիւն պիտի տայ Տիգրիսի աղբերականց եւ տեղագրութեան վրայ:»

Աւստի՛ այսչափ, Հռչակաւոր փրոֆեսորին անունն իսկ բաւական գրաւական մըն է, թէ հմտական եւ շատ հետաքրքրական երկաւորութիւն մը պիտի աւելնայ մեր գրականութեան վրայ, զոր ի ժամանակին պիտի ջանանք ըստ կարելոյն փութով ծանօթացընել մեր

ընթերցողաց. այնչափ աւելի, որչափ պատմական տեղեկութիւններն՝ զորոնք փրոֆեսորն կը խօստանայ, ստուգուի ոչ թէ միայն պատմական այլ ժամանակակից կարեւորութիւն մը ստացած են:

Ընունք մասնակցողաց շեռագրաց ցուցակի հրատարակութեան:

37. Բժշկապետ. Պր. Թովհանէս Գաւառեանց.
38. Պր. Թովհանէս Մութաֆեան.
39. Պր. Թովհանէս Եղովանեան.
40. Պր. Թովհանէս Թուման.
41. Պր. Թովհանէս Զաքարյանց.
42. Պր. Ստեփան Մալխասեան.
43. Պր. Կարապետ Եղեան.
44. Պր. Ն. Նորայր Բիւզանդացի.
45. Պր. Բ. Աբովեանց.
46. Մեծարդյոյ Միաբանութիւն Երուսաղէմայ Հայոց Ս. Թադևոսյ վանուց.
47. Փրոֆ. Պր. Գ. Էրիւկէր.
48. Պր. Ստեփան Թ. Բէքէճեան:

Միաբանութեան մատենագրաբանին հայ. ձեռագրաց ցուցակին հրատարակութեան մասնակցելու ժամանակն երկարեցինք մինչեւ Հոկտ. 25 ն. տով: Այնուհետեւ այս ցուցակն կ'արժէ ֆլ. 30 = ֆր. 62 = ռբ. 23:

ԽՄԻ. «ՀԱՆԴԻՍԻ»



ԺԱՆՈՒՑՈՒՄ

Ս իաբանութեան Ընդհ. Ըբահօր, Վեր, Ըմեն. Ըստնան Ըլաէն Ըրբայիսկոպոսի Վահանայութեան եւ գրական կենաց 50ամեայ Հիշելին հանդիսութիւնն առաջիկայ Նոյ. ամսոյ (ն. տոմ.) Յին Արակի օրւան փոխադրել պատշաճ տննուեցաւ: Նոյն օրն առաւօտն ինքն Վերապայծառ Հանդիսադիրն իւր իսկ ձայնագրած եւ երաժշտական խմբի գրած հայերէն Ս. Պատարազը պիտի մատուցանէ: Սոյն երաժշտական պատարազին երգչաց եւ երաժշտաց խումբը պիտի կառավարէ փրոֆ. Հ. Պէտմ:

Հանդիսութեան վերաբերեալ պատշաճութիւնը պիտի կատարուին Պատարա-